ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5305-Ա « 30 » հոկտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԿԻԵՎՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.11Ա ՇԵՆՔ Հ.24 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵԴԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԿԱՌՈՒՅՑԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12–ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 14.10.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, հաշվի առնելով «ԱՐՏ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 11.06.2026թ. տրված հ.26/2.207 տեխնիկական դրական եզրակացությունը, ինքնակամ կառույցների մասին «Հայկ Ավագյան Ալեքսանի» Ա/Ձ կողմից 17.04.2026թ. տրված շինությունների հատակագիծը, ինչպես նաև կառույցն իրականացրած անձի դիմումները (30.04.2026թ. հ.Դ-44212-26, 12.06.2026թ. հ.Դ-60710-26, 07.09.2026թ. հ.Դ-95848-26, 22.09.2026թ. հ.Դ-101967-26).

1.Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի հ.88 որոշումով, Երևան, Արաբկիր, Կիևյան փողոց հ.11ա շենք հ.24 բնակարանն, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փոփոխությունների, սահմանել հասարակական և ընդգրկել ոչ բնակելի ֆոնդում, որպես հասարակական՝ «ՀՀՇՆ 31-01-2014» պահանջներին չհակասելու պայմանով:

2. Հանձնարարել Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարին՝ Երևան, Կիևյան փողոց հ.11ա շենք հ.24 բնակարանը հաշվառել որպես հասարակական նշանակության:

3. Երևան Արաբկիր, Կիևյան փողոց հ.11ա շենք հ.24 հասցեում՝ քաղաքացի Սեդա Սերյոժայի Նազարյանի կողմից ինքնակամ բացված դուռը 1(մեկ) հատ, ինքնակամ բացված պատուհանը 1(մեկ) հատ (հասարակական) (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.12052025-01-0206 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2026X8VDST) ճանաչել օրինական:

4. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի h.912-Ն որոշմամբ հաշվարկված 14450 (տասնչորս հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

9.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

